

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Սինօղի ս. Էջմիածնի, որով պատուիրի թոյլաբեր Առաքել քահանայի Տ. Թադէոսեան Նորայրի զգեղջ գնալ յուխտ ի ս. Երուսաղէմ. թ. 116:

— Յանուն Սինօղի ս. Էջմիածնի, որով պատուիրի թոյլաբեր վարչութեան տպարանի Մայր Աթոռոյ ինքնին գանձել զամենայն արդիւնս իւր և պահել զամենայն հաշիւս ելեմարից. թ. 154:

— Յանուն Սինօղի ս. Էջմիածնի, ընդ որում յղելով զկատարողական թերթ պարտուց Յարութիւնի Յարութիւնեանց յանուն պ. Կարապետի Կոստանեան, պատուիրի պահանջել զպարտսն ի ժառանգաց հանդ. Յարութիւնեանցի յօգուտ փանուցն Հառիճոյ. թ. 169:

— Յանուն Ժողովրդեան Հայոց Առապատականի, ընդ որում տուաւ եկեղեցական և վարչական կանոնադրութիւն, հաստատաւ և վաւերացուցեալ՝ ի վարել զգործս թեմին ըստ այնմ. թ. 198:

— Յանուն Տ. Մեսրոպ արեղայի Մաքսուդեան, որով կարգի ի քարոզիչ Ժողովրդեան քաղաքին Ախալքալաքայ և ղիւղօրէիցն մինչ ցի. կիւրակէ գատկին. թ. 210:

— Յանուն Սինօղի ս. Էջմիածնի, ընդ որում յղեցաւ հաստատաւն նախահաշիւ փան 1903 ամի. թ. 215:

— Յանուն առաջնորդին Հայոց Վրաստանի և Իմերե-

թիւ որով պատուիրի տալ վկայական կրօնուսուցութեան Յարութիւնի Վարդապետականց. թ. 217:

— Յանուն Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ, որով պատուիրի տալ անդեկութիւն զարդի կենցաղավարութենէ Արաքսի կնոջն Կ. Պոլսեցի Յովհաննիսի Թաշճեան. թ. 233:

— Յանուն Տ. Բնձակ վարդապետի, որով կարգեցաւ ի փոխանորդ վիճակին Սալմաստայ թեմին Ատրպատականի. թ. 245:

— Յանուն Վ. իճ. Ատենին Շամախուոյ, որով կարգեցաւ Տ. Մատթէոս վարդապետն ի դործակալ քաղաքին Բաղուայ. թ. 264:

— Յանուն Վան. կառավարութեան Մ. Աթոռոյ, որով կարգեցաւ Տ. Արտակ արեղայն ի հիւրընկալ և ի դանձապահանգամ Վան. կառավարութեան. թ. 268:

— Յանուն Վ. իճ. Կոնստատրիային Հայոց Երեանայ, որով կարգեցաւ Տ. Խոսրով վարդապետն ի վանահայր ս. Կարապետի վանուց Երնջակայ. թ. 270:

— Յանուն Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ Տ. Մաղաքիա արքեպիսկոպոսի, որով լուծեալ եղև պսակն Միհրանայ Աշոտ Շամսանջեան Կ. Պոլսեցւոյ ընդ կնոջն Վերդինեայ, տալով վերջնոյս զիրաւունս վերստին ամուսնութեան, իսկ լայրն զրկելով իսպառ յիրաւանցդ. թ. 273:


— Յանուն Տ. Տրդատ եպիսկոպոսի, առաջնորդի թեմին Հայոց Կեսարիոյ, որով լուծեալ եղև պսակն Ներսիսի Աւետիքեան Ներշէ գիւղացւոյ ընդ անառակ կնոջն Առսանուշի Փօլադեան, տալով առն զիրաւունս վերստին ամուսնութեան, իսկ զկինն ոչ միայն յիրաւանցդ զրկելով, այլ և ի հաղորդութենէ ս. Եկեղեցւոյ, բաց ի ստացմանէ վերջին թոշակին. թ. 275:

— Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն անդամոց հոգաբարձութեան ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի Կ. Պ. — Թ. 274:

Հայրապետական զոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ օրհնութեան եւ զոհունակութեան յանուն
Կօլլէժակի Ասեօր Ներսէս — բէղի Տ. Անդրեասեան Սարու-
մեանց, վանն նորոգելոյ նորա զեկեղեցին հայոց Սէյդիշէն զեղջ
ճուղոյ՝ ծննդաւայրին իւրոյ. թ. 176:

— Օրհնութեան եւ խրախուսանաց յանուն հոգաբար-
ձութեան վանուց Ս. Խաչին Վարադայ. թ. 235:



ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈՂԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

1903 յունուար 8 եւ 29. Սինօղը հրամայեց՝ հրէուհի
Աննա Աննիկեանցի եւ Պէսիա Գեվերմանի Հայոց եկեղեցուն
անդամ ընդունուելու խնդիրը ուղարկել Կովկասի իշխան
կառավարչապետին եւ թոյլատուութիւն խնդրել մկրտելու
նոցա ըստ ծիսի Հայաստ. եկեղեցւոյ:

Յունվ. 10. Սինօղը հրամայեց՝ ձեմարանաւարտ Սմբատ
Սարգսեանի հարկից արձակման թուղթը ուղարկելով Երեւանի
պ. Նահանգապետին՝ խնդրել տեղեկութիւն, թէ արդեւք
չկայ նորան քահանայ ձեռնադրելու Սեծ — Շահրխար գիւղի
համար:

